ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆԸ ԵՒ ՄԱՀԸ

Վեհափառ Հայրապետի վախճանը անսպասելի էր ամենքի համար, որովհետև, Էջմիածնից հասած տեղեկութեանց նայելով, Նորին Սրբութիւնը թէպէտ անկողնին էր ծառայում, բայց շարունակ գործի էր և հիւանդութեան առանձին նշաններ չէր ցոյց տալիս, բացի ծերութեան սովորական թուլութիւնը. մինչև անգամ ամառուայ վերջերը Բիւրականի ամարանոցն էր եղել մի քանի օրով։

Վերջին երեք օրը միայն զգացել էր սրտի արտասովոր թուլութիւն, որի համար բժիշկները քննելով միջոցներ էին ձեռք առել, բայց անակնկալ մահը ի դերև հանեց նոցա աշխատութիւնը։

Երկուշաբթի առաւօտ 'ի տէր հանդեաւ մեծ Հայրապետը։

Մահուան մասին սինոդի պրոկուրորի պաշտօնակատարը հեռագրով յայտնել էր Կովկասի Փոխարքային, իսկ Սինոդը շրջաբերական հրամանագրով յանուն առաջնորդների պատուիրել էր հոգեհանդիստներ կատարել։

ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏՆԵՐ

Թիֆլիսի թեմի առաջնորդ Գեր. Տ. Գարեգին արքեպիսկոպոսի կարգադրութեամբ չորեքշաբթի ամսոյս 30-ին, վանքի աւագ եկեղեցում տեղի ունեցաւ հոգեհանդիստ բոլոր հոգևորական դասի և տասնեակ հազարաւոր ժողովրդի ներկայութեամբ։ Պատարագիչն էր ինքը Ս. Առաջնորդը, հոգեհանդստեան ներկայ էին Կովկասեան Փոխարքան իւր ամուսնով, նահանգապետը

և ամեն պետական հաստատութիւնների ներկայացուցիչներ, բոլոր օտար դաւանութեանց հոգևորականութեան ներկայացուցիչներ, հայոց բոլոր աղգային հաստատութիւնների և մամուլի ներկայացուցիչներ և այլն։

Հոգեհանգստից յետոյ ս. Առաջնորդը մի քարոզով թուեց ժողովրդին հանդ. Հայրապետի գործունէութեան գլխաւոր կէտերը և շեշտեց այն միտքը, որ առանց Էջմիածնի չի կարող հայ աղգը գոյութիւն ունենալ։

Թիֆլիզի ամեն եկեղեցիներում այնուհետև շարունակ հոգեհանգիստներ են կատարւում երեկոները ամենայն օր։

Նոյեմբերի 2-ին, 1 ժամին նոյն առթիւ հոգեհանգիստ կատարուեց Թուրքաց մզկիթում, ուր ներկայ էր առաջնորդի կողմից ուղարկուած յատուկ պատգամաւորութիւն՝ մի վարդապետ և 1 քահանայ։

ՊԱՏԳԱՄԱՒՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Վեհի մահուան օրը դպրեցան քաղաքային Դումայի նիստը և տղգային հանդէսներն և ներկայացուցիչները ի պատիւ մեծ կորստեան։ Եւ ամեն հաստատութիւններ, համայնքներ, թերթեր, ուղարկեցին իրանց ներկայացուցիչները ս. Էջմիածին վեհի թաղման, որ նշանակուած է նոյեմբերի 6-ին, երեքշաբթի օրը։ Ներկայացուցիչներ են ուղարկած և փոխարքան, քաղաք. վարչութիւնը, Ներսիսեան դպրոցը, հայ ծխական դրպրոցները, հայ ասնաֆները, բոլոր հայ հաստատութիւնները, թերթերը և այլն։

Հայ ասնաֆները ներկայանալով Թիֆլիզի թեմի ս. առաջնորդին՝ վճռել են 12 պատգամաւոր ուղարկել Էջմիածին և վերանորոգել հարիւրաւոր տարիներից ի վեր Թիֆլիսի արհեստաւորների այն կտակը, որ արձանագրուած է ս. Էջմիածնի տաճարի դռան գլխին և որով քաղաքիս արհեստաւորները խոստացել են ամեն տարի մեղրամոմ հասցնել մայր տաճարին։